Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 12

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ
ՄԱՍՆԱԳԵՏ ԱՆԱՀԻՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 11-ը՝ Տիգրան Գալստյանը, Ազատ Զաքարյանը, Արտաշես Խաչատրյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Կարեն Շահազիզյանը, Սամվել Շուխյանը, Արմենակ Սարգսյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը, Սարիբեկ Օվոյանը:

Հարգելի պատճառով բացակայում էին Նորիկ Անդրեասյանը, Վահե Մովսիսյանը, Նավասարդ Պետրոսյանը, Բաբկեն Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը, աշխատակազմի քարտուղար Գ. Դատումյանը, բաժինների պետեր Ա. Մնացականյանը, Շ. Վահանյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Ս. Սահակյանը, լրագրող Լ. Գարանյանը, Աշտարակ քաղաքի բնակիչ Ն. Բոցինյանը:

1. Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Աշտարակ համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Աշտարակ քաղաքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

6. Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

7. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Գ. Եղիազարյան/

8. Անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու համար համաձայնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

10. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

12. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 301-002 և 301-003 ծածկագրերից 0.118հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

13. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/

11 - ԿՈՂՄ ՉԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Աշտարակ համայնքի 2017 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի հաշվետվությունը հաստատելու մասին*

Եռամսակային հաշվետվությունը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Քննարկվող հարցի հետ կապված ելույթ ունեցավ ավագանու անդամ Սարիբեկ Օվոյանը: Նրա կողմից հնչեցված հարցերին պատասխանեցին Շ. Վահանյանն ու Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՉԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - *Աշտարակ համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Շանթ Վահանյանը:

Նա նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվել աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի, 5-րդ կետի և <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով:

Զեկուցման վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Փոփոխության անհրաժեշտության մասին զեկուցողին հարց ուղղեց և սպառիչ պատասխան ստացավ Ս. Օվոյանը:

Քվեարկության արդյունքում արված առաջարկությունն ընդունվեց միաձայն:

11 - ԿՈՂՄ ՉԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -4 - *Աշտարակ քաղաքի վարչական տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին*

Հարցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Շանթ Վահանյանը:

Տուրքերի և վճարների դրույքաչափերը հավելվածների տեսքով /N 1, 1/1, 1/2, 1/3/ կցվում է արձանագրությանը:

Զեկուցողը նշեց, որ նախորդ տարվա համեմատությամբ փոփոխությունները չնչին են: Փոփոխությունները ճշտելու համար զեկուցողին հարցեր տվեցին Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Կ. Շահազիզյանը և Մ. Տաշչյանը:

Ստանալով սպառիչ պատասխաններ, ելույթ ունեցողներն առաջարկեցին ներկայացված նախագիծն ընդունել որպես որոշում:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -5 - *Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին*

Օրակարգային 5-րդ հարցը ևս ներկայացրեց Շ. Վահանյանը:

Բաժնի պետը նշեց, որ առաջարկվում է հողի հարկի արտոնություն տալ 24 սեփականատիրոջ, ընդհանուրը 389 387 ՀՀ դրամի չափով և գույքահարկի մասով 24 սեփականատիրոջ՝ 709 618 ՀՀ դրամի չափով:

Արտոնություն ստացած սեփականատերերի ցուցակը կցվում է սույն արձանագրությանը:

Հարցի հետ կապված որոշակի պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քննարկման արդյունքում առաջարկություն արվեց հաստատել ներկայացված նախագիծը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -6 - *Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Եղիազարյանը և նշեց, որ հարցը քննարկման է ներկայացվել, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18/28 հոդվածի պահանջներից ելնելով:

Ներկայացվածը, համայնքային ծառայության մասով /հավելված 1/ և պայմանագրայինների մասով /հավելված 2/, կցվում է սույն արձանագրությանը:

Հաստիքացուցակի և դրույքաչափերի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնեցին և զեկուցողին հարցեր տվեցին Ա. Սարգսյանը, Ս. Օվոյանը, Մ. Տաշչյանը, Կ. Շահազիզյանը:

Հարցերին պատասխանեցին Գ. Եղիազարյանն ու Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -7 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց Գևորգ Եղիազարյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերը հավելվածների տեսքով /N N 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12/ կցվում է սույն արձանագրությանը:

Մտքերի փոխանակությանը մասնակցեցին Կ. Շահազիզյանը, Ս. Օվոյանը, Մ. Տաշչյանը: Ս. Օվոյանը հարց ուղղեց զեկուցողին և խնդրեց պարզաբանել մանկապարտեզների գործավարների վարձատրության հետ կապված որոշակի հարցեր:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Գ. Եղիազարյանն ու Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ -8</u> - Անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու համար համաձայնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց և զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Սամվել Սահակյանը:

Զեկուցողը նշեց, որ նպատակահարմար է գտնվել անհատույց վարձակալելու Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի փողոցի N 14 հասցեում գտնվող անշարժ գույքը, որտեղ իրականացվող բազմաբնույթ աշխատանքներն անմիջականորեն կապված են լինելու քաղաքի սանիտարական մաքրման, ունեցած տեխնիկայի սպասարկման և համայնքապետարանի պարտադիր ու կամավոր լիազորությունների իրականացման հետ:

Արված առաջարկությանը հավանություն տվեցին և որոշակի հարցեր բարձրացրեցին Ս. Օվոյանը, Ա. Հունանյանը, Կ. Շահազիզյանը, Տ. Գալստյանը, Վ. Մկրտչյանը:

Հարցերին սպառիչ պատասխաններ տվեց Թ. Շահվերդյանը:

Քվեարկության արդյունքում ընդունվեց որոշում /միաձայն/:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ -9</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Արմեն Մնացականյանը:

Նա առաջարկեց համաձայնություն տալ կառուցապատման իրավունքով հողամասեր տրամադրելու 167-183 ծածկագրից 41.5քմ, 861-100-01 ծածկագրից 1100քմ և 861-100-01 ծածկագրից 150քմ: Մեկ քմ-ի համար տարեկան վճարի մեկնարկային գին առաջարկվեց հաստատել համապատասխանաբար 300 ՀՀ դրամ և 70 /70/ ՀՀ դրամ /նշված տարածքների հատակագծերը կցվում է/:

Հարցի հետ կապված որոշակի պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավարը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

<u>ԼՍԵՑԻՆ - 10</u> - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Արմեն Մնացականյանը:

Առաջարկվեց համաձայնություն տալ աճուրդ-վաճառքով և ուղղակի վաճառքով օտարելու 8 միավոր գյուղ. նշանակության հողակտորներ, որոնք գտնվում են ինչպես Աշտարակի տեղամասում,

այնպես էլ Արայի տեղամասում և Քասախի կիրճում /հատակագծերը կցվում է/: 1քմ-ի մեկնարկային գին սահմանվեց հողի կադաստրային արժեքի 100%-ի չափով:

Հարցի քննարկման ժամանակ ավագանու անդամներ Ս. Օվոյանը, Մ. Տաշչյանը և Կ. Շահազիզյանը հնչեցրեցին հարցեր, որոնց սպառիչ պատասխաններ տվեցին զեկուցողն ու համայնքի ղեկավարը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -11 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Արմեն Մնացականյանը:

Առաջարկվեց քննարկել և համաձայնություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու բնակավայրերի նշանակության հողակտորներ, որոնք գտնվում են Տիգրան Մեծի փողոցում /143-001 և 135-009 ծածկագրերում/: Մեկ քառակուսի մետրի մեկնարկային գին սահմանվեց հողի կադաստրային արժեքի 50%-ը /հատակագծերը կցվում է/:

Առանձին հարցեր ճշտելու համար հարցեր տվեցին Ս. Օվոյանն ու Ա. Սարգսյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 12 - *Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված 301-002 և 301-003 ծածկագրերից 0.118հա գյուղատնտեսական նշանակության հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին*

Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանն առաջարկեց 301-002 և 301-003 ծածկագրերից 0.118հա գյուղ. նշանակության հողամասը /վարելահող/ ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու այն, մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 100%-ը:

Հարցի քննարկման ժամանակ ելույթ ունեցան Մ. Տաշչյանն ու Ա. Հունանյանը: Զեկուցողին որոշակի հարցեր ուղղեց Ս. Օվոյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Թ. Շահվերդյանն ու Ա. Մնացականյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -13 - *Հողամասերի փոխանակություն կատարելու մասին*

Փոխանակության վերաբերյալ հարցը ներկայացրեց Արմեն Մնացականյանը:

Զեկուցողը նշեց, որ փոփոխությունները վերաբերվում են վեց միավոր հողակտորների: Քաղաքացիների դիմումների ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացության հիման վրա առաջարկվում է համաձայնություն տալ կատարելու տեղափոխությունները, քանի որ դրանք խնդիրներ չեն առաջացնում քաղաքի գլխավոր հատակագծի հետ:

Հարցի քննարկման ժամանակ մտքերի փոխանակությանը մասնակցեցին Ա. Հունանյանը, Վ. Մկրտչյանը, Ս. Օվոյանը, Ա. Սարգսյանը, Հ. Վարդանյանը: Ելույթների ընթացքում բարձրացված հարցերին պատասխանեցին և լրացուցիչ պարզաբանումներ տվեցին քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Մնացականյանն ու համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:
Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի նոյեմբերի 15-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
Ա. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԸ

ՏՊ
Ա.Հ.